

ԷԴԳԱՐ ՇԱՀԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ «ԱՆԱՀԻՏԻ» ԷՋԵՐՈՒՄ (1898-1911)*

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ*

Մեծ է 1898-1911 և 1929-1949 թվականներին Փարիզում ընդմիջումներով հրատարակվող «Անահիտ» գրական-գեղարվեստական հանդեսի կարևորությունը հայ ազգի և մշակույթի համար: Այս լուսավորչական հանդեսի հիմնադիր-խմբագրի՝ ականավոր գրող, քննադատ, թարգմանիչ և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի նպատակն էր նպաստել հայ ազգի մտավոր ու բարոյական զարգացմանը, ազգային ինքնաճանաչմանը: Պատահական չէ, որ շնորհաշատ ֆրանսահայ նկարիչ և գրաֆիկ Էդգար Շահինի ստեղծագործությունը ներկայացնող և վերլուծող հայ և օտարազգի հեղինակների հոդվածները «Անահիտի» էջերում գտան իրենց պատվավոր տեղը:

Սույն հոդվածում առաջին անգամ է քննվում Է. Շահինի ստեղծագործությունը «Անահիտ» հանդեսի հրապարակման առաջին շրջանի (1898-1911 թթ.) համարներում: Այդ ուսումնասիրություններն ունեն կարևոր նշանակություն մասնագետների համար մինչ օրս՝ ինչպես արվեստաբանական վերլուծության, այնպես էլ աղբյուրագիտական առումներով: Միևնույն ժամանակ արդիական է նաև դրանց հանրայնացումը՝ ազգային-լուսավորչական նպատակով:

Բանալի բառեր՝ «Անահիտ», Փարիզ, Արշակ Չոպանյան, Էդգար Շահին, գեղանկարիչ, գրաֆիկ, գեղարվեստական քննադատություն:

Ներածություն

Անկարելի է թերագնահատել 1898-1911 և 1929-1949 (ընդմիջումով) թվականներին Փարիզում հրատարակվող «Անահիտ» գրական-գեղարվեստական հանդեսի և նրա հիմնադիր-խմբագիր, գրող, քննա-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6E077 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի նկարիչների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, mkamalyan@inbox.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

դատ, թարգմանիչ, հասարակական գործիչ, «Պատվո լեգեոնի» շքանշանակիր Արշակ Չոպանյանի¹ գործունեության կարևորությունը հայ ազգի և մշակույթի համար: Մեծատառով հայորդին իր առջև նպատակ էր դրել նպաստել հայ ազգի մտավոր ու բարոյական զարգացմանը, ազգային ինքնաճանաչմանը և ինքնարժևորմանը, ազգային ինքնության պահպանմանը: «Զարգացնել ինքնաճանաչությունը..., զգացնել թե փրկութեան մեծագոյն լծակը բարոյական կրթութիւնն է՝ զոր լուրջ հիմերու վրա հաստատուած Դպրոցը և անկեղծութեամբ, ուսումնասիրութեամբ ու խանդով շինուած Գրականութիւնը միայն կրնան տալ մեզի, հարստացնել հայ միտքը մաքուր, կենսալիք, գեղեցիկ տարրերով... ջանալ վերջապէս, որ ամբողջ ազգը հակառակ ամէն պատուարի եւ անջրպետի ամուր կապերով եղբայրանայ եւ ներդաշնակովի մեծ ազնիւ գաղափարի մը շուրջը, այն է կամքը մարդկութեան մէջ գեղեցկութիւն ու կեանք ծնուցանող տարր մը ըլլալու, - ահաւասիկ ինչ որ կը նկատենք նուիրական պարտքը մեր այսօրուան մտաւորական դասին, եւ այդ պիտի ըլլայ գործը, որուն ԱՆԱՀԻՏ պիտի ձգտի նպաստել», - գրում է խմբագիրը անդրանիկ համարի ներածականում: Մեծ և կարևոր առաքելություն, որն արդիական է նաև այսօր:

Հիմնական նյութի շարադրանք

Լուսավորչական հանդեսի տիտղոսաթերթը, երրորդ համարից սկսած, զարդարեց հայ նկարիչ, «Պատվո լեգեոն» շքանշանի ասպետ Էդգար Շահինի ձևավորած ճակատանկարը: Այն ուղեկցվում էր ֆրանսիացի գրող և պատմաբան Ժյուլ Միշլեի խոսքերով՝ ««Խոսք» և «Լույս» երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ: Եւ առանց պատճառի չէ այդ: Լոյսը կերպով մը բնութեան խոսքն է: Եւ խոսքն ալ մտքին լոյսն է: Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ: Յափտենական խոսակցութիւն մը կ'անցնի բնութեան և հոգիին միջեւ: Եթէ հոգին չթարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկ-

¹ Տե՛ս **Չոպանյան Արշակ**, Երկեր: Առաջաբանը՝ Կարլեն Դալլաքյանի, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 3-22:

² **Անահիտ**: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1898, նոյեմբեր, թիվ 1, էջ 5-6:

ցուած մթին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար»³: Եվ Է. Շահինի՝ միջնադարյան ձեռագրերի խորանների նմանությամբ ձևավորված ճակատանկարն ասես ընդգծում էր հանդեսի սրբազնական առաքելությունը: 1899 թվականի երրորդ համարից տեղեկանում ենք, որ այս ճակատանկարը հրատարակվել է Լառուս բառարանում («Revue encyclopédique Larousse») և «Ըվոլը դ'արտ» («Oeuvre d'art») գեղարվեստական հանդեսում՝ «Անահիտի» մասին հոդվածներով⁴:

Ա. Չոպանյանը բարձր էր գնահատում Է. Շահինի նկարչական տաղանդը, ուրույն աշխարհագրացողությունը և մարդկային որակները: Պատահական չէ, որ «Անահիտի» էջերում կերպարվեստին նվիրված հոդվածների թվում թերևս ամենամեծ տեղը վերապահված է Է. Շահինի ստեղծագործությանը: Վերլուծական և տեղեկատվական բնույթի հետաքրքիր հոդվածներ ենք գտնում 1899, 1900, 1901, 1902, 1904, 1905 և 1911 թվականների համարներում: Հոդվածները հաճախ ուղեկցվում են նկարչի աշխատանքների վերատպություններով: Հետաքրքիր են ժամանակի ֆրանսիացի քննադատների՝ Ռոժե Մարքսի, Քլեման Ժանենի, Գաբրիել Մուրեի, Գյուստավ Սուլիեի՝ Է. Շահինի արվեստին նվիրված ծավալուն վերլուծական հոդվածների թարգմանությունները: Նպատակը հասկանալի էր՝ ներկայացնել մեր հայրենակցի արվեստն օտարի աչքերով: «Փարիզի պես առաջացյալ ու դժվարահաճ միջավայրի մը մեջ, - և իր (Է.Շահինի - Մ.Ք.) վրա գրող մը մեծ քննադատներ միշտ հիշած են անոր հայ ըլլալը, - հրճվանքի ու հպարտության աղբյուր մըն է ամեն ազգասեր հայու համար», - գրում է Ա. Չոպանյանը⁵:

Է. Շահինի ստեղծագործությանը նվիրված առաջին վերլուծական ակնարկը «Անահիտ» հանդեսի էջերում տպագրվեց 1899-ին. դա «Լ'էստամպ Է Լ'աֆիշ» («L'estampe et l'affiche») գեղարվեստական հանդեսում լույս տեսած ֆրանսիացի քննադատ Քլեման-Ժանենի հոդվածի

³ **Անահիտ**: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1899, հունվար, թիվ 3, տիտղոսաթերթ (ոչ էջակալած):

⁴ Տե՛ս «Անահիտ»ը Բարիզեան մամլոյն մէջ, Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1899, հունվար, թիվ 3, էջ 116:

⁵ **Չոպանյան Արշակ**, Երկեր, էջ 806:

թարգմանությունն էր⁶: Հոդվածագիրը ներկայացնում էր Է. Շահինին որպես «օժտեալ նկարիչ... ու խղճամիտ, խուզարկու եւ դիրաւ չգոհացող գծագրիչ մը»⁷: Ծագումով հայը, ուսանելով Իտալիայում, ըստ արվեստաբանի, վենետիկցիներից վերցրել է հուզմունքով ստեղծագործելը, իսկ Ֆրանսիայում գրավվել է թշվառների պատկերներով, թեև այդ թեմային տվել է անհատական և յուրօրինակ մեկնաբանություն:

Հաջորդ անդրադարձը Է. Շահինի ստեղծագործությանը 1899 թվականի նոյեմբեր-դեկտեմբերյան համարներում է, որտեղ անանուն հեղինակը (գուցե Ա. Չոպանյանը) կարևորում է արվեստագետի անհատականության դրոշմը «թե՛ իր դիտողութեան շրջանակին, թե՛ կեանքը ըմբռնելու և թարգմանելու իր եղանակին և թե՛ իր աշխատութեան մեթոտին մեջ»⁸: Հոդվածում հաջորդիվ ներկայացվում է «Լա ռեվյու դ'արտ»-ի («La Revue d'Art») դրվատական կարծիքը սկսնակ օֆորտիստի մասին, և հրապարակվում են ֆրանսիական այդ հանդեսում գետնից երկու օֆորտների՝ «Թափառաշրջիկը» և «Շատո Ռուփ», վերատպությունները:

«Անահիտ» հանդեսի 1900 թվականի փետրվար-մարտ ամսվա 4-5 համարներում Ա. Չոպանյանն ընթերցողին է ներկայացնում «Քարիզի գեղարուեստական քննադատութեան ամենէն հեղինակաւոր վարպետներէն մէկը» Ռոժե Մարքսի՝ «Գազետ դե Բոգ-առ» («Gazette des Beaux-Arts») հանդեսում տպագրված հոդվածը⁹: Հեղինակը, հպանցիկ նշելով նկարչի ուուցիչներին՝ Վենետիկում Անտոնիո Պաոլետտին, իսկ Փարիզում Ժան-Պոլ Լորանսին և Բենժամեն Կոնստանին, առանձնացնում է Է. Շահինի սերը դեպի ճշմարտությունը: Նա կարևորում է արվեստագետի խորհրդածող ու զգայուն որակները, այն

⁶ **Քլեման-Ժանէն**, Էտկար Շահին, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1899, սեպտեմբեր, թիվ 11, էջ 355-356:

⁷ Նույն տեղում, էջ 356:

⁸ **Էտկար Շահին**, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1899, նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ 1-2, էջ 25:

⁹ **Ռոժե Մարքս**, Էտկար Շահին, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1900, փետրվար-մարտ, թիվ 4-5, էջ 111-112:

«խանդաղատագին գթութիւն»-ը, որը ճառագում է Շանգելիզեի սալոններում ցուցադրված «Ողորմելի կյանքը» ընդհանուր տիտղոսով ցուցահանդեսի նկարներից: Միևնույն ժամանակ ֆրանսիացի քննադատը շեշտում է Շահին-օֆորտիստի մեծ ներուժը՝ նկատելով, որ «...փորագրութեան մէջ է, որ Պ. Շահին գտած է արտայայտութեան ձեւ մը իր միջոցներուն յարմար եւ իր գործադրողի կարողութեանց ու վերլուծողի սրատեսութեան լիակատար չափը տալու ատակ»¹⁰: Հոգվածագիրը մասնավորապես հիշատակում է «Շատո Ռուփ»-ը, «Երկաթուղու աշխատողը», «Բարձով կինը», ինչպես նաև մտավորականներ, արվեստագետ, վիպասան Պասկալ Ֆորտյունիի, գրող Ժյուլ Կորնելիի, բելգիացի նկարիչ Ալֆրեդ Ստեվենսի դիմանկարները:

«Անահիտի» 1902 թվականի հունվարյան և փետրվարյան երկու համարներում Ա. Չոպանյանը զետեղում է ֆրանսիացի քննադատ Գաբրիել Մուրեի «Հայ փորագրիչ մը Պ. Էդգար Շահին» խորագրով ծավալուն հոդվածը՝ նկարչի վեց ստեղծագործությունների վերատպություններով («Իտալուիին», «Անատոլ Ֆրանս», «Մուրացկանուիի», «Ալֆրեդ Ստեվենս» և այլն), որը հրատարակվել էր 1901 թվականի դեկտեմբերին «Ստուդիո» («The Studio») անգլո-ֆրանսիական ամսաթերթում¹¹: Օտարազգի հեղինակը բացատրում է Է. Շահինի ստեղծագործությունը պարուրող մելամաղձոտության ակունքը հայ ազգին բաժին հասած դժվար ճակատագրով: «Ներկայ գտնուեցա՞ւ արդեոք այն ջարդերուն որ կարմիր Սուլթանին հրամանով կատարուեցան, այն վայրագ կոտորումներուն որ իր երկիրը բզբտեցին, չեմ գիտեր: Բայց արձագանքը իրեն բերաւ... իր մորթուած քոյրերուն աղաղակները... հասկանալի է որ ատկից իր հոգւոյն մէջ անվանելի մելամաղձոտութիւն մը պահած ըլլայ», - գրում է Գ. Մուրեն¹²: Հիացմունք արտահայտելով

¹⁰ Նույն տեղում, էջ 111:

¹¹ **Կապրիել Մուրե**, Հայ փորագրիչ մը *պ. Էդկար Շահին*, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1902, հունվարի, թիվ 1, էջ 6-7: **Կապրիել Մուրե**, Հայ փորագրիչ մը *պ. Էդկար Շահին*, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1902, փետրվար, թիվ 2, էջ 26-27:

¹² **Կապրիել Մուրե**, Հայ փորագրիչ մը *պ. Էդկար Շահին*, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1902, հունվար,

օֆորտի տեխնիկային կարճ ժամանակաշրջանում կատարելության աստիճանի տիրապետելու նկարչի ձիրքի վերաբերյալ՝ հեղինակը կարևորում է նաև նրան բնահատուկ այլ կարևոր հատկանիշներ: «Դիտողության սուր ձիրքեր, էջին կարգաւորման կատարեալ հմտութիւն մը, արժեցումներու թանկագին արուեստ մը, բոլորովին մասնայատուկ բնորոշման կամք մը, անոր մէջ ի յայտ կը բերէին առաջին կարգի արուեստագետ մը»¹³: Այնուհետև վերլուծելով Է. Շահինի՝ թշվառներին նվիրված պատկերաշարը՝ Գ. Մուրեն հանգում է այն եզրակացության, որ խղճուկ կեցվածքների և հոգնատանջ դիմագծերի հետևում նկարիչը կարողանում է գուշակել մարդկային հոգին և բնութագրում է Է. Շահինին որպես դիմանկարչի՝ «...կարող ըմբռնելու եւ սեւեռելու մարդկութիւնը՝ իր ամենէն այլազան երեւոյթներուն տակ եւ իր ամենէն տարբեր յայտնաբերութեանց մէջ»¹⁴:

1905 թվականի մարտի և ապրիլի 3-րդ և 4-րդ համարներում Ա. Չոպանյանն ընթերցողներին ծանոթացնում է Գյուստավ Սուլիեի «Լ'առ դեկորատիֆ» («L'Art Decoratif») գեղարվեստական ամսագրում տպագրված ծավալուն հոդվածին¹⁵: Հեղինակը մանրամասն քննում է Է. Շահինի՝ Փարիզի սալոններում ցուցադրված ստեղծագործությունները և դրանց առանձնահատկությունները, ներկայացնում կենսագրական թարմ տեղեկություն, ինչպիսին էր 1903 թվականի Վենետիկի միջազգային գեղարվեստական ստուգատեսում նրան շնորհված ոսկե մեդալը, հիշատակում է նաև նկարչի նկարազարդումները Անատոլ Ֆրանսի «Կատակերգական պատմություն» գրքի համար: Բարձր գնահատելով Է. Շահինի գրաֆիկական ձիրքը՝ հեղինակն արժևորում է նաև նրա գեղանկարչական շնորհը՝ հույս հայտնելով, որ «...օր մը այս արուեստագէտը, որ իր ճերմակ ու սեւերով այնքան գունաճոխ եւ հզոր է արդէն, վրձինը նորէն ձեռք պիտի առնէ՝ դարձեալ կեանք նկարելու

թիվ 1, էջ 6:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 8:

¹⁵ **Կիիսթավ Սուլիե**, Էտկար ՇԱՀԻՆ, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1905, մարտ, թիվ 3, էջ 55-60: Կիիսթավ Սուլիե, Էտկար ՇԱՀԻՆ, Անահիտ: Հանդես Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1905, ապրիլ, թիվ 4, էջ 74-79:

համար»¹⁶: Հոգվածն ուղեկցվում էր Է. Շահինի ստեղծագործությունների տասնյակի հասնող վերատպություններով:

1900 թվականի հունիսի 19-ին Ա. Չոպանյանը երեկույթ է կազմակերպում, որի նպատակն էր քաջալերել արվեստագետ Էդգար Շահինին և գիտնական Երվանդ Մանվելյանին: «...Տարրական պարտականություն մը կատարած կ'ըլլանք եզական մեծարանքի հարկ մը մատուցանելով Մանուէլեանի եւ Շահինի պէս դէմքերու, որոնց նմանը մեր ցեղը, - նոյն իսկ որեւէ ցեղ, - յաճախ չ'արտադրեր, եւ որոնք, այն պահուն ուր կը կկորսնցնենք Անդրէաս Արծրունին եւ Այվազովսքին, կուգան ապացուցանել յարանորոգ կենսականութիւնը հայ հանճարին»¹⁷: Իր «Մանուէլեան եւ Շահին» հոդվածում Ա. Չոպանյանը գիտնականին հատուկ օբյեկտիվ հիմնավորումներով և մեծ մարդուն հատուկ մաքուր սրտով ու կամեցողությամբ լեցուն նուրբ և բարի բնութագրերով հոգվածագիրը խորհում է արվեստագետի՝ նրա շնորհի, մարդկային տեսակի, կրթության, ներշնչանքի աղբյուրների, նպատակների և հաջողությունների մասին¹⁸:

1902 թվականի մայիսի 29-ին Է. Շահինը մասնակցում է Ա. Չոպանյանի կազմակերպած «Հայ արվեստի երեկույթին»՝ ձևավորելով միջոցառման ծրագիրը: Այն «...պճնուած էր հայկական ոճով գունաւոր սիրուն զարդանկարով մը զոր Էտկար Շահին փորագրած էր Բարիզի ազգային մատենադարանին մէջ գտնուած հին նկարաւոր ձեռագրի մը հետետողությամբ»¹⁹: Բարեգործական երեկույթի հասույթը տրամադրվեց Կիպրոսի հայկական մանկատանը:

«Անահիտը» իր տեղեկատվական բաժնում պարբերաբար թարմացնում էր նաև Է. Շահինի ստեղծագործական կյանքի և հաջողությունների մասին տեղեկությունները: Այսպես, 1899 թվականի թիվ

¹⁶ **Կիիսթավ Սուլիէ**, Էտկար ՇԱՀԻՆ, Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1905, ապրիլ, թիվ 4, էջ 75:

¹⁷ **Չոպանեան Արշակ**, Մանուէլեան եւ Շահին, Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1900, ապրիլ, մայիս, հունիս, թիվ 6-8, էջ 154:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Հայկական արուեստի երեկույթը, Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1902, հունիս, թիվ 6, էջ 134:

7 համարում կարդում ենք Է. Շահինի, Զ. Զաքարյանի և Ա. Շաբանյանի համատեղ ցուցահանդեսի մասին²⁰: 1904 թ. ապրիլ-մայիսյան համարների բաժանորդագիրը տեղեկանում է, որ Լյուքսեմբուրգի թանգարանի համար ֆրանսիական կառավարությունը Է. Շահինից Փարիզի Մարսյան դաշտի Սալոնում (Salon du Champ de Mars) ցուցադրված ստեղծագործությունն է գնել: Թանգարանի վարչությունը խնդրել է արվեստագետին, որ «հաճի նուիրել իր փորագրութեանց ամբողջական հաւաքածուն»²¹: «Անահիտի»՝ 1911 թվականի 9-12 համարներում խոսվում է Է. Շահինի նոր գրաֆիկական աշխատանքների ցուցադրության մասին Ժորժ Պոտի պատկերասրահում: Ներկայացվում է նաև այն փաստը, որ ցուցադրված ստեղծագործություններին անվանի քննադատ Գյուստավ Կանի նվիրված հոդվածը լույս կտեսնի առաջիկայում «Լ'առ է լեզ արտիստ» («L'Art et les Artistes») ամսագրում²²:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ «Անահիտի» էջերում Է. Շահինի ստեղծագործությանը նվիրված հոդվածներն ունեն կարևոր նշանակություն նեղ մասնագետների համար նաև այսօր՝ ինչպես վերլուծական, այնպես էլ աղբյուրագիտական առումներով: Միևնույն ժամանակ արդիական է նաև դրանց հանրայնացումը՝ ազգային և լուսավորչական կենսական նպատակով:

Ավարտենք մեր հոդվածը հանդեսի հիմնադիր-խմբագրի և մեծ մտավորականի խոսքերով. «...մեր ժողովրդին արդի շփոթ ու ցաւագին կացութեանը մէջ, ես փափաքեցայ հիմնել եղբայրական մեծ ժամադրավայր մը, ուր... աշխարհիս չորս անկիւնէն՝ հայ մտքեր, - անոնք որ, հին կամ նոր, գեղեցկասէր կամ օգտապաշտ, գործնական կամ

²⁰ «Այս տարուան Քարիզի նկարչական Սալօնին, մեր հայրենակիցներէն մասնակցած են Պ. Պ. Շահին, Զաքարեան, Տրիանտեան և Շաբանեան», Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1899, մայիս, թիվ 7, էջ 219:

²¹ **Անահիտ:** Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1904, ապրիլ-մայիս, թիվ 4-5, էջ 96:

²² Էտկար Շահինի նոր գործերը, Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1911, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիվ 9-12, էջ 225:

գաղափարական, Յեղին ուժը կը ներկայացնեն..., որպեսզի... մեր ամբողջ ցրուած, տառապող, շուարած ժողովրդին ներշնչեն հաւատք՝ ապագային, ու ստեղծեն Լոյսը, գիտակից ու վճիտ մտաւոր լոյսը, որ անհրաժեշտ է որպէսզի այդ ապագան իրականանայ»²³:

ТВОРЧЕСТВО ЭДГАРА ШАИНА НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «АНАИТ»

МАРГАРИТА КАМАЛЯН

Большое значение для культуры армянского народа имеет литературно-художественный журнал «Анаит», публиковавшийся в Париже с перерывами в 1898-1911 и 1929-1949 годах. Целью основателя-редактора этого просветительского журнала – выдающегося писателя, критика, переводчика и общественного деятеля Аршака Чопаняна было стимулировать интеллектуальное и моральное развитие армянского народа, способствовать национальному самопознанию. Не случайно статьи армянских и иностранных авторов, посвященные творчеству одаренного французского художника и графика армянского происхождения Эдгара Шаина, нашли свое почетное место на страницах журнала «Анаит».

В данной статье творчество Э. Шаина впервые рассмотрено на основе публикаций в «Анаит» периода 1898-1911гг. Исследование представляет интерес как для специалистов в области искусствоведения и источниковедения, так и для широких слоев населения в качестве дополнительной информации о художнике.

Ключевые слова: «Анаит», Париж, Аршак Чопанян, Эдгар Шаин, художник, график, художественная критика.

THE OEUVRE OF EDGAR CHAHIN ON THE PAGES OF THE JOURNAL «ANAHIT»

MARGARITA KAMALYAN

Of great importance for Armenian culture is the literary-artistic journal «Anahit», which came out in Paris intermittently in 1898-1911 and 1929-1949. The purpose of the founder-editor of this educational journal, the eminent writer, critic, translator and public figure Arshag Chobanian was to promote intellectual and moral development of the Armenian people and encourage national self-

²³ **Զօպանեան Արշակ**, Անահիտի դերը, Անահիտ: Հանդէս Ամսեայ: Ազգային, գրական, գեղարուեստական: Փարիզ, 1899, հոկտեմբեր, թիվ 12-, էջ 389:

knowledge. Not surprisingly, the articles by Armenian and foreign authors, dedicated to the oeuvre of the gifted French painter and graphic artist of Armenian origin Edgar Chahine, found their honorary place on the pages of «Anahit».

In the article, E. Chahine's oeuvre is for the first time considered based on the issues of the first period of publication of «Anahit» (1898-1911). The paper is of interest for specialists in the field of art criticism and source study, as well as for a broader audience to enhance their knowledge about the artist's oeuvre.

Key words: «Anahit», Paris, Archag Chobanian, Edgar Chahine, painter, graphic, art criticism.